ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

---

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

18 հոկտեմբերի 2016 թվականի **թիվ 23** քաղ. Մոսկվա

**Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2016-2017 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչների իրագործման միջոցառումների ցանկի մասին**

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 63-րդ կետին համապատասխան եւ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2016-2017 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչների մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016 թվականի մայիսի 31-ի թիվ 5 որոշումը կատարելու նպատակով՝

1. Հաստատել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2016-2017 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչների իրագործման միջոցառումների՝ կից ներկայացվող ցանկը (այսուհետ՝ ցանկ):

2. Խնդրանքով դիմել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ մակրոտնտեսական քաղաքականություն անցկացնելիս հաշվի

առնել ցանկում նշված միջոցառումները եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնել դրանց իրագործման ընթացքի մասին:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրման եւ մակրոտնտեսական հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Տ. Դ. Վալովայային ապահովել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2016-2017 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչների իրագործմանն ուղղված գործողությունների վերլուծության անցկացումը, եւ համակարգել Հանձնաժողովի իրավասությանը վերապահված մասի համար ցանկով նախատեսված միջոցառումների կատարումը:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում` Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում հրապարակվելու օրվանից:

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝**

| Հայաստանի Հանրապետությունից՝ | Բելառուսի Հանրապետությունից՝ | Ղազախստանի Հանրապետությունից՝ | Ղրղզստանի Հանրապետությունից՝ | Ռուսաստանի Դաշնությունից՝ |
|---|---|---|---|---|
| Վ. Գաբրիելյան | Վ. Մատյուշեւսկի | Ա. Մամին | Օ. Պանկրատով | Ի. Շուվալով |

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի
հոկտեմբերի 18-ի թիվ 23 կարգադրությամբ

ՑԱՆԿ

**Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2016-2017 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչների իրագործման միջոցառումների**

| Հիմնական կողմնորոշիչների իրագործմանն ուղղված գործողություններ | Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից իրականացման համար հանձնարարվող միջոցառումներ | Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից իրականացվող միջոցառումներ | Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պատասխանատու դեպարտամենտներ | Ակնկալվող տնտեսական արդյունքը |
|---|---|---|---|---|
| I. Մակրոտնտեսական կայունության ապահովում | | | | |
| Ուղղություն 1. Գնաճի մակարդակի կայունացման համար միջոցների ձեռնարկում | | | | |
| 1. Եվրասիական տնտեսական միության | ազգային մակարդակով այնպիսի միջոցների | գնաճի միջնաժամկետ կողմնորոշիչներին հասնելու | Մակրոտնտեսական քաղաքականության | անդամ պետությունների |

| | | | | |
|---|---|---|---|---|
| անդամ պետությունների կողմից (այսուհետ՝ Միություն, անդամ պետություններ) գնաճի թիրախավորման ռեժիմում դրամավարկային քաղաքականության իրականացմանն անցնելու ուղղությամբ աշխատանքների շարունակում եւ տվյալ ռեժիմին անցնելու համար պայմանների ստեղծում | ձեռնարկում, որոնք ապահովում են անդամ պետությունների կողմից որոշված գնաճի միջնաժամկետ կողմնորոշիչներին հասնելը եւ անդամ պետությունների կողմից գնաճի մակարդակի՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված քանակական արժեքը (սպառողական գների ինդեքսը) պահպանելը<br>Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ (այսուհետ՝ Հանձնաժողով) | եւ Պայմանագրով սահմանված գնաճի մակարդակի քանակական արժեքը (սպառողական գների ինդեքսը) պահպանելու համար անդամ պետությունների կողմից ձեռնարկվող միջոցների վերլուծություն<br>անդամ պետությունների լիազորված մարմինների հետ խորհրդակցությունների անցկացում եւ անդամ պետությունների կողմից Պայմանագրով սահմանված գնաճի մակարդակի քանակական արժեքը (սպառողական գների | դեպարտամենտ, Ֆինանսական քաղաքականության դեպարտամենտ | կողմից գնաճի միջնաժամկետ կողմնորոշիչներին հասնելը<br>անդամ պետությունների կողմից գնաճի մակարդակի՝ Պայմանագրով սահմանված քանակական արժեքը (սպառողական գների ինդեքսը) պահպանելը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | խորհրդակցություններ անցկացնելը եւ Պայմանագրով սահմանված գնաճի մակարդակի քանակական արժեքը (սպառողական գների ինդեքսը) անդամ պետությունների կողմից գերազանցելու դեպքում՝ Հանձնաժողովի մշակած հանձնարարականները հաշվի առնելը | ինդեքսը) գերազանցելու դեպքում՝ Հանձնաժողովի հանձնարարականների մշակում | | |
| 2. Գնաճի մակարդակի մասով միջնաժամկետ կողմնորոշիչների որոշմանն ուղղված մոտեցումների մշակում | մասնակցություն Պայմանագրով սահմանված գնաճի (սպառողական գների ինդեքսի) մակարդակի ցուցանիշի սահմանային արժեքի հաշվարկման մեթոդական մոտեցումների հստակեցման | Պայմանագրով սահմանված գնաճի մակարդակի ցուցանիշի սահմանային արժեքի (սպառողական գների ինդեքսի) հաշվարկման մեթոդական մոտեցումների հստակեցման շուրջ | Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ | գնաճի մակարդակի քանակական արժեքի հաշվարկման ու որոշման մոտեցումների հստակեցում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | աշխատանքներին մասնակցություն անդամ պետությունների գնաճի մակարդակի միջնաժամկետ կողմնորոշիչի որոշմանն ուղղված մոտեցումների մշակմանը եւ քննարկմանը | առաջարկությունների նախապատրաստում եւ անդամ պետությունների հետ խորհրդակցությունների կազմակերպում<br>անդամ պետությունների գնաճի մակարդակի միջնաժամկետ կողմնորոշիչի որոշման մոտեցումների մշակման եւ քննարկման շուրջ առաջարկությունների նախապատրաստում եւ խորհրդակցությունների կազմակերպում | | |
| 3. Սոցիալական նշանակություն ունեցող ապրանքների եւ ծառայությունների | սոցիալական նշանակություն ունեցող ապրանքների եւ ծառայությունների մանրածախ գների մակարդակի | սոցիալական նշանակություն ունեցող ապրանքների եւ ծառայությունների գների զգալի աճ թույլ չտալուն եւ | Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ, Ձեռնարկատիրական | սոցիալական նշանակություն ունեցող ապրանքների եւ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| գների զգալի աճ թույլ չտալուն, ինչպես նաեւ այդպիսի ապրանքների եւ ծառայությունների ցանկերի թարմացմանն ուղղված մեխանիզմների կատարելագործում եւ միջոցների իրագործում | պարբերական դիտանցման իրականացում<br>սոցիալական նշանակություն ունեցող ապրանքների եւ ծառայությունների ցանկերի թարմացում՝ անհրաժեշտության դեպքում | այդպիսի ապրանքների եւ ծառայությունների ցանկերի թարմացմանն ուղղված՝ անդամ պետությունների գործողությունների դիտանցում | գործունեության զարգացման դեպարտամենտ | ծառայությունների գների զգալի աճի զսպում |
| 4. Մրցակցության ընդհանուր կանոնների եւ գների պետական կարգավորման կարգի խախտումների հայտնաբերում<br>Անդամ պետությունների մրցակցային | անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների կողմից անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման նշանների առկայության վերաբերյալ հաղորդումների (նյութերի) եւ գների պետական կարգավորում | անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր պայմանների խախտումների նշանների առկայության մասին հաղորդումների (նյութերի) եւ մեկ այլ անդամ պետության կողմից գների պետական կարգավորում ներմուծելու | Հակամենաշնորհային կարգավորման դեպարտամենտ | մրցակցության ընդհանուր կանոնների եւ գների պետական կարգավորում ներմուծելու կարգի խախտումների կանխում<br>օժանդակություն՝ |

| | | | |
|---|---|---|---|
| (հակամենաշնորհային) օրենսդրության եւ անդամ պետությունների տարածքներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխում | ներմուծելու մասին մեկ այլ անդամ պետության որոշման հետ անհամաձայնության վերաբերյալ անդամ պետությունների հաղորդումների փոխանցում Հանձնաժողով | մասին որոշումների վիճարկման վերաբերյալ անդամ պետությունների դիմումների ուսումնասիրում | անդամ պետություններում գնաճի մակարդակի զսպմանը |
| | անդամ պետությունների ապրանքային շուկաներում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման նկատմամբ հակամենաշնորհային հսկողության իրականացում՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից հակամենաշնորհային օրենսդրության եւ | անդամ պետությունների անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ հսկողության լիազորությունների իրագործում՝ անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների կողմից մրցակցության ընդհանուր կանոնների խախտումները կանխելու նպատակներով, եւ | |

մրցակցության ընդհանուր կանոնների խախտումները կանխելու եւ համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակներով

անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների գործողությունների (անգործության) նկատմամբ հսկողության իրականացում՝ հակամենաշնորհային օրենսդրության եւ ապրանքային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումները կանխելու նպատակներով, եւ հակամենաշնորհային արձագանքման

համապատասխան միջոցների ձեռնարկում

անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների կողմից մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացում այնպիսի խախտումները կանխելու նպատակով, որոնք անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա թողնում են կամ կարող են թողնել բացասական ազդեցություն, այդ թվում՝ հանգեցնում են գների չհիմնավորված աճի

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համապատասխան միջոցների ձեռնարկում | | | |
| 5. Գնումային եւ ապրանքային միջամտությունների իրագործում եւ զարգացում՝ որպես սոցիալական նշանակություն ունեցող պարենային ապրանքների գների սեզոնային տատանումների նվազեցման գործիք | անհրաժեշտության դեպքում ագրոպարենային շուկայում գնումային եւ ապրանքային միջամտությունների անցկացում | գնումային եւ ապրանքային միջամտությունների իրագործմանն ու զարգացմանն ուղղված՝ անդամ պետությունների գործողությունների դիտանցում | Ագրոարդյունաբերական քաղաքականության դեպարտամենտ, Ներքին շուկաների գործառման դեպարտամենտ, Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ | սոցիալական նշանակություն ունեցող պարենային ապրանքների գների զգալի աճի զսպում |
| 6. Մանրածախ առեւտրի գործիքների ընդլայնում (էլեկտրոնային | մանրածախ առեւտրի զարգացման համար պայմանների ստեղծում, այդ թվում՝ տոնավաճառային | անդամ պետությունների գործողությունների դիտանցում՝ ուղղված մանրածախ առեւտրի | Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ, Ներքին շուկաների գործառման | ազգային ապրանքների գների զգալի աճի զսպում մանրածախ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| առեւտուր, խանութ-պահեստներ, տոնավաճառներ եւ այլն), որոնք ապահովում են ապրանքների իրացումն առավել ցածր գներով եւ մեծացնում են ապրանքների հասանելիությունը անդամ պետությունների բնակչության համար | միջոցառումներին անդամ պետությունների ապրանքարտադրողների հասանելիության դյուրինացում անդամ պետություններում եւ Միության տարածքում ազգային ապրանքներով էլեկտրոնային առեւտուրը խրախուսելու համար պայմանների ստեղծում | գործիքների զարգացման եւ ընդլայնման համար պայմանների ստեղծմանը տոնավաճառային գործունեության եւ էլեկտրոնային առեւտրի զարգացման եւ կարգավորման համաշխարհային փորձի ուսումնասիրություն | դեպարտամենտ, Տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտ, Առեւտրային քաղաքականության դեպարտամենտ, Ձեռնարկատիրական գործունեության զարգացման դեպարտամենտ | ապրանքաշրջանառության ծավալի ավելացում |
| 7. Բնական մենաշնորհների ծառայությունների սակագների տնտեսապես | կարգավորվող ծառայությունների սակագների (գների) ձեւավորման ժամանակ սպառողների եւ բնական մենաշնորհների սուբյեկտների | անդամ պետություններում բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման համակարգի եւ փորձի համեմատական | Տրանսպորտի եւ ենթակառուցվածքի դեպարտամենտ | բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայությունների գների չհիմնավորված |

| | | | |
|---|---|---|---|
| հիմնավորված կարգավորում՝ հաշվի առնելով դրանց սպառողների եւ արտադրողների շահերի հավասարակշռության պահպանումը | շահերի հավասարակշռության ապահովում եւ ձեռքբերում<br><br>սահմանվող սակագների (գների) համապատասխանության ապահովում բնական մենաշնորհների այն ոլորտների ծառայությունների որակին, որոնց վրա տարածվում է կարգավորումը<br><br>այնպիսի տնտեսական պայմանների ստեղծում, որոնց դեպքում բնական մենաշնորհների սուբյեկտների համար շահավետ է կրճատել ծախքերը, ներդնել նոր տեխնոլոգիաներ, բարձրացնել ներդրումների օգտագործման | վերլուծության անցկացման աշխատանքների շարունակում<br><br>բնական մենաշնորհների ոլորտում անդամ պետությունների՝ մոտարկման ենթակա նորմատիվ իրավական ակտերը սահմանելու վերաբերյալ առաջարկությունների մշակում եւ անդամ պետությունների հետ համաձայնեցում եւ այդ ոլորտում օրենսդրության ներդաշնակեցմանն ուղղված համապատասխան միջոցների իրականացման հաջորդականությունը | աճ թույլ չտալը<br><br>օժանդակություն՝ անդամ պետություններում գնաճի զսպմանը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | արդյունավետությունը<br><br>անդամ պետությունների բնական մենաշնորհների ոլորտների եւ համապատասխան նորմատիվ իրավական ակտերի մոտարկման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում | որոշելու մասով միջոցառումների պլանի («ճանապարհային քարտեզի») մշակում | | |
| 8. Անդամ պետությունների՝ մենաշնորհի վիճակում գտնվող շուկաների վերլուծություն՝ դրանց օպտիմալ կարգավորման եւ հնարավոր մրցակցային շուկայի ձեւավորման | մենաշնորհի վիճակում գտնվող ապրանքային շուկաներում մրցակցության ձեւավորմանը եւ զարգացմանն ուղղված միջոցների մշակում | անդամ պետությունների՝ մենաշնորհի վիճակում գտնվող ապրանքային շուկաներում մրցակցության ձեւավորմանը եւ զարգացմանն ուղղված միջոցների մասին տեղեկատվության հավաքում եւ ամփոփում | Հակամենաշնորհային կարգավորման դեպարտամենտ | մենաշնորհի վիճակում գտնվող ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի զարգացում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| նպատակով | | | | |
| 9. Անդամ պետությունների ազգային արժույթների օգտագործման ակտիվացում փոխադարձ առեւտրի ոլորտում | փոխադարձ առեւտուր իրականացնելիս, փոխադարձ հաշվարկներում անդամ պետությունների ազգային արժույթների օգտագործումն ընդլայնելու համար պայմանների կատարելագործում<br><br>ըստ անհրաժեշտության՝ անդամ պետությունների ազգային վճարային համակարգերի զարգացում<br><br>անդամ պետությունների շահագրգիռ կենտրոնական (ազգային) բանկերի միացում «Ազգային վճարային համակարգերի զարգացման | անդամ պետությունների ռեզիդենտների միջեւ վճարահաշվարկային հարաբերությունների մեխանիզմի գործառման եւ կատարելագործման դիտանցում<br><br>Միջպետական բանկի հետ անդամ պետությունների ռեզիդենտների միջեւ վճարահաշվարկային հարաբերությունների մեխանիզմի կատարելագործման հարցերով համագործակցության ուղղությունների որոշում | Ֆինանսական քաղաքականության դեպարտամենտ, Ներքին շուկաների գործառման դեպարտամենտ, Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ | փոխադարձ հաշվարկներում գործարքների գծով ծախքերի կրճատում եւ Միության ամբողջ տարածքում վճարային ծառայությունների հասանելիության ապահովում<br><br>փոխադարձ առեւտուր իրականացնելիս ազգային արժույթներով հաշվարկների մասնաբաժնի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համակարգման հարցերով աշխատանքային խմբի ստեղծման մասին» 2015 թվականի դեկտեմբերի 31-ի համաձայնագրին | միասնական վճարային տարածք (միասնական վճարային ենթակառուցվածք) ստեղծելու համար անհրաժեշտ նախապայմանների վերլուծության անցկացում | | ավելացում<br>անդամ պետությունների տնտեսություններում ազգային արժույթների դերի բարձրացում |
| Ուղղություն 2. Անդամ պետությունների բյուջետային համակարգերի հավասարակշռվածության պահպանում | | | | |
| 1. Անդամ պետությունների բյուջեների եկամտային մասի ավելացում, այդ թվում՝ հարկային համակարգի կատարելագործման եւ հարկային վարչարարության արդյունավետության | հարկային օրենսդրության եւ հարկային վարչարարության գործիքների կատարելագործում՝ հարկերի հավաքման ամբողջականության ապահովման նպատակով<br>«Անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ | հարկային օրենսդրության եւ հարկային վարչարարության գործիքների կատարելագործմանն ուղղված՝ անդամ պետությունների գործողությունների դիտանցում<br>անդամ պետությունների | Ֆինանսական քաղաքականության դեպարտամենտ | պետական բյուջեների եկամտային մասի ավելացում՝ անդամ պետությունների կողմից պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի պակասուրդի՝ Պայմանագրով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| բարձրացման միջոցով | Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջեւ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին արձանագրության նախագծի նախապատրաստում | լիազորված մարմինների հետ փաստաթղթերի նախագծերի համաձայնեցման մասով խորհրդակցությունների անցկացում, Հանձնաժողովի կոլեգիայի ուսումնասիրմանը ներկայացնելու համար նյութերի նախապատրաստում | | սահմանված արժեքի պահպանումն ապահովելու նպատակով |
| | հարկային վարչարարության իրականացման համար «Անդամ պետությունների հարկային մարմինների միջեւ էլեկտրոնային տեսքով տեղեկատվության | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | փոխանակման մասին» արձանագրության նախագծի համաձայնեցում | | | |
| 2. Մաքսային վարչարարության որակի եւ արդյունավետության բարձրացում անդամ պետությունների բյուջեներ այն վճարների մուտքերը ավելացնելու նպատակով, որոնց վարչարարությունն իրականացվում է մաքսային մարմինների կողմից | էլեկտրոնային հայտարարագրման համակարգի զարգացում<br>լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտի կատարելագործում<br>անցում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանը<br>միջգերատեսչական փոխգործակցության զարգացում<br>ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու | մաքսային վարչարարության որակի բարձրացմանն ու արդյունավետությանն ուղղված՝ անդամ պետությունների գործողությունների դիտանցում | Մաքսային օրենսդրության եւ իրավակիրառ պրակտիկայի դեպարտամենտ, Մաքսային ենթակառուցվածքի դեպարտամենտ, Ձեռնարկատիրական գործունեության զարգացման դեպարտամենտ | պետական բյուջեների եկամտային մասի ավելացում՝ անդամ պետությունների կողմից պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի պակասուրդի՝ Պայմանագրով սահմանված արժեքի պահպանումն ապահովելու նպատակով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հնարավորության ընձեռման մոտեցումների փոփոխություն | | | |
| 3. Ռազմավարական տեսանկյունից զարգացման առաջնահերթ ուղղությունների եւ տնտեսության հատվածների վրա ռեսուրսների կենտրոնացման հաշվին բյուջետային ծախսերի օպտիմալացում | բյուջետային ծախսերի վերաբաշխում՝ ռազմավարական տեսանկյունից տնտեսության առաջնահերթ հատվածների զարգացման նպատակով<br>Հանձնաժողովի հետ խորհրդակցություններ անցկացնելը եւ պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի պակասուրդի՝ Պայմանագրով սահմանված քանակական արժեքը գերազանցելու դեպքում մշակված՝ Հանձնաժողովի հանձնարարականները հաշվի | բյուջեի ծախսերի օպտիմալացմանն ուղղված՝ անդամ պետությունների գործողությունների դիտանցում<br>անդամ պետությունների լիազորված մարմինների հետ խորհրդակցությունների անցկացում եւ Հանձնաժողովի հանձնարարականների մշակում՝ պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի պակասուրդի՝ Պայմանագրով սահմանված քանակական արժեքը գերազանցելու | Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ, Ֆինանսական քաղաքականության դեպարտամենտ | պետական բյուջեների ծախսային մասի օպտիմալացում՝ անդամ պետությունների կողմից պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի պակասուրդի՝ Պայմանագրով սահմանված արժեքի պահպանումը ապահովելու նպատակով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | առնելը | դեպքում | | |
| 4. Բյուջեի անտոկոս ծախսերի աճի տեմպերի ճշգրտում՝ հաշվի առնելով պետական կառավարման հատվածի բյուջեի ձեւավորվող պակասուրդը (հավելուրդը) | պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի պակասուրդի՝ Պայմանագրով սահմանված քանակական արժեքի պահպանում, այդ թվում՝ անտոկոս ծախսերի աճի տեմպերը դրա եկամուտների աճի տեմպերը չգերազանցող մակարդակի վրա պահելու հաշվին՝ առաջնային պակասուրդի աճ չթույլատրելու նպատակով | պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի ծախսերի արդյունավետության դիտանցում, վերլուծություն եւ գնահատում | Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ, Ֆինանսական քաղաքականության դեպարտամենտ | անդամ պետությունների բյուջետային համակարգի հավասարակշռվածության ապահովում<br>պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի պակասուրդի կրճատում եւ պետական փոխառության հաշվին բյուջեի լրացուցիչ ֆինանսավորման |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | անհրաժեշտության նվազեցում |
| 5. Ոչ ֆինանսական ակտիվներով գործառնությունների օպտիմալացում՝ բյուջետային համակարգերի հավասարակշռվածության աստիճանը բարձրացնելու նպատակով | պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի պակասուրդի՝ Պայմանագրով սահմանված քանակական արժեքի պահպանում, այդ թվում՝ ոչ ֆինանսական ակտիվներով գործառնությունների օպտիմալացման հաշվին | պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի՝ ֆինանսական ակտիվների ձեռքբերման հետ կապված ծախսերի արդյունավետության դիտանցում, վերլուծություն եւ գնահատում | Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ, Ֆինանսական քաղաքականության դեպարտամենտ | անդամ պետությունների բյուջետային համակարգի հավասարակշռվածության ապահովում<br>պետական բյուջեի պակասուրդի կրճատում եւ պետական փոխառության հաշվին բյուջեի լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտության նվազեցում |

Ուղղություն 3. Պետական կառավարման հատվածի պարտքի կայունության ապահովում

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. Պարտքի կառավարման ռազմավարության մշակում եւ իրագործում՝ անդամ պետությունների տնտեսությունների համար առավել բարդ ժամանակահատվածներում ծայրահեղ ծանրաբեռնվածությունից խուսափելու համար՝ պետական կառավարման հատվածի պարտքի ցուցանիշի՝ Պայմանագրով | անհրաժեշտության դեպքում պարտքի կառավարման ազգային ռազմավարությունների մշակում<br><br>պետական կառավարման հատվածի պարտքի՝ ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսներով ցուցանիշների ազգային այնպիսի սահմանային արժեքների սահմանում, որոնք ապահովում են պետական կառավարման հատվածի պարտքի ցուցանիշի՝ Պայմանագրով սահմանված քանակական արժեքի պահպանումը | պետական կառավարման հատվածի պարտքի ցուցանիշի՝ Պայմանագրով սահմանված քանակական արժեքի եւ պետական կառավարման հատվածի պարտքի կայունության այլ ցուցանիշների դիտանցում, ինչպես նաեւ տվյալ դիտանցման արդյունքների վերլուծություն<br><br>անդամ պետությունների լիազորված մարմինների հետ խորհրդակցությունների անցկացում եւ Հանձնաժողովի հանձնարարականների մշակում՝ պետական | Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ | անդամ պետությունների կողմից պետական կառավարման հատվածի պարտքի ցուցանիշի՝ Պայմանագրով սահմանված քանակական արժեքի պահպանում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| սահմանված քանակական արժեքը պահպանելու նպատակով | Հանձնաժողովի հետ խորհրդակցություններ անցկացնելը եւ Հանձնաժողովի այն հանձնարարականները հաշվի առնելը, որոնք մշակված են պետական կառավարման հատվածի պարտքի ցուցանիշի՝ Պայմանագրով սահմանված քանակական արժեքը գերազանցելու դեպքում | կառավարման հատվածի պարտքի ցուցանիշի՝ Պայմանագրով սահմանված քանակական արժեքը գերազանցելու դեպքում | | |
| 2. Պետական կառավարման հատվածի վրա պարտքային ծանրաբեռնվածությունը չավելացնող մեխանիզմների օգտագործման միջոցով առաջնահերթ | մասնավոր հատվածի ներքին եւ արտաքին ուղղակի ներդրումների ներգրավման խրախուսում՝ պետական կառավարման հատվածի՝ պարտքային գործիքների հաշվին ֆինանսավորվող ներդրումների մասնաբաժինը | անդամ պետությունների՝ մասնավոր հատվածի ուղղակի ներդրումների խրախուսմանն ուղղված միջոցների դիտանցում | Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ, Ձեռնարկատիրական գործունեության զարգացման դեպարտամենտ | ընդհանուր ներդրումներում պետական պարտքային գործիքների հաշվին ֆինանսավորվող ներդրումների մասնաբաժնի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| նախագծերի ֆինանսավորման հնարավորության ուսումնասիրում | նվազեցնելու համար՝ հաշվի առնելով առաջնահերթ նախագծերի իրագործման անհրաժեշտությունը | | | նվազեցում, պետական կառավարման հատվածի պարտքի աճի տեմպերի կրճատում |
| 3. Ներքին աղբյուրների հաշվին բյուջետային պակասուրդի ֆինանսավորման ապահովում՝ արտաքին շուկայում փոխառությունների ռիսկերը նվազեցնելու համար | պետական արժեթղթերի եւ ազգային արժույթով արտահայտված այլ պարտքային գործիքների շուկայի զարգացում՝ պետական կառավարման հատվածի պարտքի արժութային ռիսկի նվազեցման նպատակով | անդամ պետությունների՝ պետական արժեթղթերի եւ ազգային արժույթով արտահայտված այլ պարտքային գործիքների զարգացմանն ուղղված միջոցների վերլուծություն, այդ թվում՝ պետական կառավարման հատվածի պարտքի ցուցանիշի՝ Պայմանագրով սահմանված քանակական արժեքը | Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ, Ֆինանսական քաղաքականության դեպարտամենտ | ներքին աղբյուրների հաշվին բյուջետային պակասուրդի ֆինանսավորման ավելացում պետական կառավարման հատվածի պարտքի ընդհանուր գումարի մեջ պետական կառավարման հատվածի՝ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | գերազանցած անդամ պետությունների համար Հանձնաժողովի հանձնարարականների մշակում | | արտարժույթով արտահայտված պարտքի նվազեցում |
| II. Կայուն զարգացման եւ տնտեսական աճի վերականգնման համար պայմանների ստեղծում | | | | |
| Ուղղություն 1. Անդամ պետությունների տնտեսությունների բազմազանեցում | | | | |
| 1. Տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների որոշում | Հանձնաժողովի՝ «Եվրասիական տնտեսական միությունում ինտեգրացիոն ներուժ ունեցող տնտեսության ոլորտները եւ դրա օգտագործմանն ուղղված միջոցները» զեկույցի ուսումնասիրում<br>մասնակցություն փորձագիտական խմբի՝ Եվրասիական տնտեսական | «Եվրասիական տնտեսական միությունում ինտեգրացիոն ներուժ ունեցող տնտեսության ոլորտները եւ դրա օգտագործմանն ուղղված միջոցները» զեկույցի նախապատրաստում եւ ներկայացում Միության մարմինների ուսումնասիրմանը | Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ, Վիճակագրության դեպարտամենտ | տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների որոշում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | միության ինտեգրացիոն ներուժի ձեւավորման ու գնահատման համար ներերկրային եւ միջերկրային «Ծախսեր-Թողարկում» աղյուսակների օգտագործման աշխատանքին | Եվրասիական տնտեսական միության ինտեգրացիոն ներուժի ձեւավորման ու գնահատման համար ներերկրային եւ միջերկրային «Ծախսեր-Թողարկում» աղյուսակների օգտագործման հարցերով փորձագիտական խմբի աշխատանքի կազմակերպում | | |
| 2. Միության արտադրանքով երրորդ երկրների արտադրանքի ներմուծափոխարինման քաղաքականության իրագործում, այդ թվում՝ անդամ | Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրագործում<br>Հաստոցաշինության եվրասիական ինժինիրինգային | Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրագործման ժամանակ անդամ պետությունների խորհրդատվական | Արդյունաբերական քաղաքականության դեպարտամենտ, Ներքին շուկաների գործառման դեպարտամենտ, Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ | անդամ պետությունների շուկաներում ազգային արտադրանքի մասնաբաժնի ավելացում |

| | | | |
|---|---|---|---|
| պետությունների արդյունաբերական համալիրների զարգացման միջոցով | կենտրոնի ձեւավորում | աջակցություն եւ գործունեության համակարգում | |
| | արդյունաբերական կոոպերացիայի եւ սուբկոնտրակտացիայի ցանցի ստեղծման հայեցակարգի մշակում, որը ներառում է դրա ձեւավորման կարգը | արդյունաբերական կոոպերացիայի եւ սուբկոնտրակտացիայի զարգացման եւ ցանցերի ստեղծման համաշխարհային փորձի վերլուծության անցկացում | |
| | մաքսային ենթակառուցվածքի օբյեկտներն անդամ պետությունների տարածքներում արտադրվող մաքսային հսկողության տեխնիկական միջոցներով հագեցնելու մասով ներմուծափոխարինման | մաքսային ենթակառուցվածքի օբյեկտներն անդամ պետությունների տարածքներում արտադրվող մաքսային հսկողության տեխնիկական միջոցներով հագեցնելու մասով ներմուծափոխարինման | Մաքսային ենթակառուցվածքի դեպարտամենտ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | քաղաքականության իրագործման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում, եթե միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ | քաղաքականության իրագործման վերաբերյալ առաջարկությունների ամփոփում, եթե միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ | | |
| 3. Նորարարական ակտիվության խրախուսում եւ նորարարական տեխնոլոգիաների ներմուծման համար պայմանների ստեղծում | աջակցություն նորարարական ակտիվությանը, ներառյալ՝ նորարարական գործունեության կարգավորման կատարելագործման միջոցները<br>մասնակցություն առաջնահերթ եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորմանը՝ եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման ուղղությունների ցանկին համապատասխան | արդյունաբերության զարգացման համաշխարհային փորձի եւ անդամ պետությունների արդյունաբերության թվային փոխակերպման մոտեցումների վերլուծության անցկացում<br>առաջնահերթ եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման համակարգում՝ եվրասիական | Արդյունաբերական քաղաքականության դեպարտամենտ, Տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտ | նորարարական արտադրանքի մասնաբաժնի աճ<br>նորարարական ոլորտում արդյունավետ համագործակցություն ապահովվելու համար պայմանների ստեղծում<br>նորարարական ենթակառուցվածքի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | տեխնոլոգիական հարթակների ձեւավորման ուղղությունների ցանկին համապատասխան | | զարգացում, նորարարության մեջ ներդրումների աճ |
| 4. Անդամ պետությունների գիտահետազոտական եւ փորձակոնստրուկտորական համատեղ աշխատանքների անցկացումը կազմակերպելու մեխանիզմների մշակում բարձր տեխնոլոգիական արտադրությունների, այդ թվում՝ ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում՝ | ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում գիտահետազոտական եւ փորձակոնստրուկտորական համատեղ աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում<br><br>ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում անդամ պետությունների գիտական եւ նորարարական գործունեության համակարգման վերաբերյալ առաջարկությունների | ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում գիտահետազոտական եւ փորձակոնստրուկտորական համատեղ աշխատանքների կազմակերպման կարգի մշակման մասով անդամ պետությունների գործունեության համակարգում<br><br>ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում անդամ պետությունների գիտական եւ նորարարական | Ագրոարդյունաբերական քաղաքականության դեպարտամենտ | գիտատեխնիկական համագործակցության խորացում եւ նորարարական զարգացման խրախուսում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| զարգացումը խթանելու նպատակով | նախապատրաստում | գործունեության համակարգման վերաբերյալ Հանձնաժողովի կոլեգիայի հանձնարարականի նախապատրաստում | | |
| 5. Փոքր եւ միջին բիզնեսի աջակցության համալիր միջոցների իրագործում | փոքր եւ միջին բիզնեսի աջակցության համալիր այնպիսի ծրագրերի ընդունում եւ իրագործում, որոնք ներառում են ձեռնարկատիրության զարգացման լրացուցիչ խթանների ստեղծման եւ փոքր ու միջին բիզնեսի աջակցության համար պետական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման միջոցառումները<br><br>Միության ապրանքային | փոքր եւ միջին բիզնեսի աջակցության համալիր ծրագրերի ընդունմանը եւ իրագործմանն ուղղված՝ անդամ պետությունների գործողությունների վերլուծություն<br><br>Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրի եւ Միության ապրանքների ծագման տեղանունների միասնական ռեեստրի ձեւավորման եւ | Ձեռնարկատիրական գործունեության զարգացման դեպարտամենտ | անդամ պետությունների ՀՆԱ-ում փոքր եւ միջին բիզնեսի արտադրանքի մասնաբաժնի աճ<br><br>փոքր եւ միջին բիզնեսի նոր ստեղծված ձեռնարկությունների քանակի ավելացում<br><br>ձեռնարկատիրական ակտիվության |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | նշանների եւ Միության ապրանքների ծագման տեղանունների գրանցման, իրավական պահպանության եւ օգտագործման մեխանիզմների ներդրում՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ փոքր եւ միջին բիզնեսի իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նպատակով | կիրառման ապահովում փոքր եւ միջին բիզնեսի ներկայացուցիչներին խորհրդատվական եւ մեթոդական օգնության տրամադրում | | ավելացում, մտավոր սեփականության ոլորտում փոքր եւ միջին բիզնեսի վարման համար լրացուցիչ պայմանների ստեղծում |
| 6. Անդամ պետությունների տնտեսությունների վրա ինտեգրացիոն գործընթացների ազդեցության | անդամ պետությունների տնտեսությունների վրա ինտեգրացիոն գործընթացների ազդեցության մակրոտնտեսական եւ ճյուղային արդյունքների | անդամ պետությունների տնտեսությունների վրա ինտեգրացիոն գործընթացների ազդեցության մակրոտնտեսական եւ ճյուղային արդյունքների | Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ | անդամ պետությունների տնտեսությունների վրա ինտեգրացիոն գործընթացների ազդեցության |

| | | | | |
|---|---|---|---|---|
| մակրոտնտեսական եւ ճյուղային արդյունքների գնահատման սկզբունքների եւ մոտեցումների մշակում եւ համաձայնեցում | գնահատման մասով Հանձնաժողովի փորձնական հաշվարկների քննարկում | գնահատման մասով փորձնական հաշվարկների նախապատրաստում | | մակրոտնտեսական եւ ճյուղային արդյունքների քանակական գնահատականների ստացում |

Ուղղություն 2. Ֆինանսական միջոցների աղբյուրների ընդլայնում եւ վարկային ռեսուրսների հասանելիության մեծացում՝ հիմնական կապիտալում ներդրումների ծավալներն ավելացնելու նպատակով

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. Առաջնահերթ նախագծերի համար միջոցների նպատակային հատկացման արդյունավետ մեխանիզմների հետագա զարգացում | նպատակային հատկացման եւ առաջնահերթ նախագծերի համար միջոցների օգտագործման նկատմամբ պատշաճ հսկողության ապահովում<br>տնտեսության հատվածներում եւ անդամ պետությունների զարգացման | առաջնահերթ ծրագրերի համար միջոցների նպատակային հատկացման մեխանիզմների հետագա զարգացմանն ուղղված՝ անդամ պետությունների գործողությունների վերլուծություն | Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ, Ֆինանսական քաղաքականության դեպարտամենտ | առաջնահերթ ծրագրերի համար հատկացված միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | առաջնահերթություններին համապատասխանող նախագծերում բյուջետային ներդրումների եւ նպատակային լրավճարների իրականացման գործիքների ձեւավորման եւ զարգացման իրավական եւ ինստիտուցիոնալ հիմքերի կատարելագործում | | | |
| 2. Պետական-մասնավոր գործընկերության մեխանիզմների կիրառման ոլորտը կանոնակարգող՝ անդամ պետությունների օրենսդրության | պետական-մասնավոր գործընկերության մեխանիզմների կիրառման՝ անդամ պետությունների եւ միջազգային գործելակերպերի փորձի վերլուծություն<br>պետական-մասնավոր գործընկերության ոլորտում անդամ պետությունների | Եվրասիական տնտեսական միության շրջանակներում պետական-մասնավոր գործընկերության մեխանիզմների զարգացման հարցերով փորձագիտական խմբի նիստերի եւ պետական-մասնավոր գործընկերության մեխանիզմների | Ձեռնարկատիրական գործունեության զարգացման դեպարտամենտ | Միության տարածքում պետական-մասնավոր գործընկերության նախագծերի իրականացման օպտիմալ մեխանիզմների |

| | | | |
|---|---|---|---|
| կատարելագործում՝ հաշվի առնելով լավագույն միջազգային գործելակերպերը, անդամ պետությունների առավել առաջադեմ մոդելները, երրորդ երկրների եւ ինտեգրացիոն միավորումների լավագույն փորձը | օրենսդրության կատարելագործման եւ ներդաշնակեցման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում<br>Միության շրջանակներում պետական-մասնավոր գործընկերության նախագծերի (այդ թվում՝ ինտեգրացիոն բնույթի) իրագործման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում<br>մասնակցություն պետական-մասնավոր գործընկերության հարցերի շուրջ համատեղ համաժողովներին, ֆորումներին, | կատարելագործման հարցերի շուրջ անդամ պետությունների ներկայացուցիչների խորհրդակցությունների կազմակերպում, այդ թվում՝ պետական-մասնավոր գործընկերության մեխանիզմների կիրառման կարգը կանոնակարգող՝ անդամ պետությունների նորմատիվ-իրավական բազան ձեւավորելու ժամանակ օգտագործման եւ Միության տարածքում պետական-մասնավոր գործընկերության նախագծերը գործնականում իրագործելու համար<br>օժանդակություն անդամ | ներդրման համար բարենպաստ պայմանների ստեղծում |

| | |
|---|---|
| խորհրդակցություններին, ուսումնագործնական սեմինարներին, կլոր սեղաններին եւ այլ միջոցառումների | պետություններին պետական-մասնավոր գործընկերության ոլորտում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ տեղեկատվության փոխանակման, այդ թվում՝ վերլուծական եւ տեղեկատվական նյութերի փոխանակման հարցում<br><br>պետական-մասնավոր գործընկերության հարցերի շուրջ համատեղ համաժողովների, ֆորումների, խորհրդակցությունների, ուսումնագործնական սեմինարների, կլոր սեղանների եւ այլ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | միջոցառումների կազմակերպում եւ անցկացում | | |
